



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2018 թվականի N 51-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանի N 1 հավելվածի՝ որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Հրազդանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը կից հասարակական հիմունքներով գործող սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի անհատական կազմը.

1) *Վանիկ Հունանյան* - անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ,

2) *Սյրելյա Ղազարյան* - անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Հրազդանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ,

3) *Հարություն Խաչատրյան* - անդամ - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Հրազդանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն,

4) *Սուսաննա Ասատրյան* - անդամ - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Հրազդանի տարածքային բաժնի պետ,

5) *Աշխեն Մարգարյան* - անդամ - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Կոտայքի մարզի բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի Հրազդանի բուժվիճակագիր,

6) *Արևիկ Նահապետյան* - անդամ - Հրազդան համայնքի բնակիչ,

7) Անահիտ Գաբրիելյան - անդամ - «Քաղաքացիական Ակադեմիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ,

8) Ժաննա Գյուլումյան - անդամ - «Քաղաքացիական Ակադեմիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ,

9) Թեհմինե Բաղայան - անդամ - «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության Հրազդանի սոցիալական աշխատակից,

10) Մարյուն Անդրեասյան - անդամ - Հրազդան համայնքի բնակիչ,

11) Լիանա Սուրիասյան - անդամ - Հրազդան համայնքի բնակիչ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի փետրվարի 28  
ք. Հրազդան



ԳՈՒԼՈՅԱՆ